Կնքված պայմանագրերի մասին հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի փողոցների վերակառուցում
(2 Լոտ)
TUR-13.1/TUR-13.4

Լոտ 1՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում, TUR-13.1

Ծրագրի անվանում՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման
Երկիր՝ Հայաստան
Ծրագրի համար՝ P150327
Շնորհված ընկերություն՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ
Հասցե՝ Ախուրյան շրջկենտրոն, 2601
Քաղաք/Մարզ՝ Շիրակի մարզ
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 21 մարտի 2023թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 404,918,936 (չորս հարյուր չորս միլիոն ինը հարյուր տասնութ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ *240 օր*
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսվում է.
Խանջյան փողոցում՝ երթևեկելի մասի ասֆալտի ծածկույթի փոխարինում՝ իր բոլոր ենթաշերտերով, մայթերի նորոգում' իրականացնելով բետոնե սալիկներով սալարկում, ծախ մայթի /7մ/ հաշվին երթևեկելի մասի ընդլայնում՝ կայանատեղերի համար, փողոցի կահավորում, նշագծում, երթևեկության նշանների տեղադրում, տարածքի հարմարեցում բնակչությունն սակավաշարժ խմբերի համար /թեքահարթակների կառուցում, թույլ տեսողություն ունեցող մարդկանց համար նախատեսված սալահատակի տեղադրում/, անձրևային ջրահեռացման համակարգի վերակառուցում, կոյուղագծի վերանորոգում/վերակառուցում, ջրագծի դիտահորերի կանոնակարգում, արտաքին լուսավորության կազմակերպում, գոյություն ունեցող գազամատակարարման գծի որոշ հատվածներ ստորգետնյա եղանակով վերատեղադրում, չգործող էլեկտրական տրանսպորտի գծերի/սյուների ապամոնտաժում, տարածքի բարեկարգում' նստարանների, աղբամանների, զբոսաշրջային ցուցանակների տեղադրում:
Չայկովսկու փողոցում՝ երթևեկելի մասի և մայթերի չափերի վերանայում, փողոցի նորոգում «Բարեկամության» այգու երկարության չափով' վերջում շրջադարձային հարթակի կառուցմամբ, ասֆալտի ծածկույթի իրականացում' իր բոլոր ենթաշերտերով, մայթերի կառուցում' իրականացնելով բետոնե սալիկներով սալարկում, ձախ մայթով անցնող էլեկտրամատակարարման գծի տեղափոխում աջ կողմ, կաուփ գծերի վերատեղադրում ստորգետնյա եղանակով, փողոցի կահավորում, նշագծում, երթևեկության նշանների տեղադրում, տարածքի հարմարեցում բնակչության սակավաշարժ խմբերի համար/թեքահարթակների կառուցում, թույլ տեսողություն ունեցող մարդկանց համար նախատեսված սալահատակի տեղադրում/, ջրուսգծի դիտահորերի կանոնուսկարգում, արտաքին լուսավորության կազմակերպում, տուսրածքի բարեկարգում' աղբամանների տեղադրում:

Լոտ 2՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի վերականգնում, TUR-13.4

Ծրագրի անվանում՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման
Երկիր՝ Հայաստան
Ծրագրի համար՝ P150327
Շնորհված ընկերություն՝ «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ
Հասցե՝ Շիրակի 47/3
Քաղաք/Մարզ՝ ք. Երևան
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 13 մարտի 2023թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 957,470,407 (ինը հարյուր հիսունյոթ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր յոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ *365 օր*
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսվում է իրականացնել Հաղթանակի պողոտայի երկու երթևեկելի մասերի և դրանք միմյանց միացնող երթևեկելի կարճ հատվածների վերանորոգում/վերակառուցում/, պողոտայի կահավորում՝ նշագծում, լուսատուների և երթևեկության նշանների տեղադրում, մայթերի վերակառուցում և սալիկապատում բետոնե սալիկներով, Հաղթանակի այգու ցանկապատի կանոնակարգում/նորոգում, հեղեղատար կոյուղու համակարգի երկու նոր գծերի կառուցում, կոյուղագծի վերանորոգում/վերակառուցում, արտաքին լուսավորության կազմակերպում, ժամանակակից լուսատուների տեղադրում, գոյություն ունեցող էլեկտրամատակարարման և կապի գծերի կանոնակարգում, չգործող էլեկտրական գծերի/սյուների ապամոնտաժում, տարածքի հարմարեցում բնակչության սակավաշարժ խմբերի համար, մայթերի բարեկարգում՝ նստարանների, աղբամանների, զբոսաշրջային ցուցանակների տեղադրում: